600.0312.12.07.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2017 թվականի №312Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի №464Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով «ՎԱՆԴԱՎ ԿՈՄՖՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հունիսի 27-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 1-ի «ՎԱՆԴԱՎ ԿՈՄՖՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №9/1-56 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №464Ա որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված ռադիոհաճախականության օգտագործման №0834 թույլտվության պայմանների 4-րդ կետի 2-րդ, 3-րդ և 9-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2) բազային ռադիոկայանի տեղադրման վայրը՝ ք. Երևան, Այվազովսկու 5/3.».

   «3) բազային ռադիոկայանի տեղադրման վայրի աշխարհագրական կոորդի-նատները՝ 44E 32′, 40N 08′.».

   «9) անտենայի բարձրությունը երկրի մակերեսից՝ 10 մ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
12 հուլիսի 2017թ.
ժամը 16[00]